


### ՆԵՐՍԵՍ ԱԿԻՆՅԱՆ

1963 թ. հոկտեմբերի 28-ին Վիեննայում, ութսուն տարեկան հասակում, վախճանվեց հայ դասական բանասիրության ականավոր ներկայացուցիչներից մեկը՝ Ներսես Ակինյանը:



Վաթսուն տարվա գիտական գործունեություն, շուրջ 500 գրական-պատմական-բանասիրական ուսումնասիրություններ, անտիպ բնագրերի բնական հրատարակություններ, թարգմանություններ, գրախոսականներ և գաղափարական հոդվածներու Ահա բազմաշխատ գիտնականի կուտակած վաստակը հայրենի գիտության անդաստանում:

Հանձին ն. Ակինյանի հայագիտությունը կորցրեց բազմակողմանի հետաքրքրությունների տեր մի գիտնականի, որը հայկական ազդյունների ուսումնասիրությունը հարստացրեց ոչ միայն սեփական հետազոտություններով, այլև կես դար լինելով հայագիտական ամենալուրջ պարրերականներից մեկի՝ «Հանգես ամսօրյա»-ի աշխատակիցն ու խմբագրապետը, Հանգեսի հատորներում հրատարակեց նաև շատ ուրիշ գիտնականների բազմաթիվ արժեքավոր ուսումնասիրություններ, որոնք մեծապես նպաստեցին հայագիտության անաչքնթացին բաժանորդ դարձնել:

Մեծ է ն. Ակինյանի գերը նաև հայ գրավոր մշակույթի հուշարձանների՝ հայերեն հին

ձեռագրերի հայթայթման, ցուցակագրման, պահպանման և ուսումնասիրության գործում: Հանդուցյալ գիտնականը 1909 թ. սկսած հանդիսանում էր Վիեննայի Մխիթարյան մատենադարանի մատենագրաբանապետը, իսկ Վիեննայից գուրս նա ձեռագրերով է զբաղվել, ինչպես նաև հայ մշակույթի մասին հրատարակախոսություններ է կարդացել Սվրոպայի և Արևելյի շատ երկրներում՝ Հայաստանում, Հունգարիայում, Քուլդարիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, Գերմանիայում, Սիրիայում, Եգիպտոսում, Պաղեստինում, Կիպրոսում և այլուր:

Հատկապես թանկ է Ակինյանի երախտիրը հայկական ազդյունների հրատարակման, զննատման, բնագրերի ճշգրտման և զանազան բանասիրական հարցերի բնությունը բնագավառում Երաջայտուն վկաներն են նրա աշխատությունները՝ «Կիրոն կաթողիկոս Վրացո «Պատմութիւն հայ-վրացական հարաբերութեանց է գարու մեջ» (1895), «Տիմոթէոս Կուղ հայ մատենագրութեան մէջ» (1909), «Յովնաթան Նազար և Յովնաթանեանը և իրենց բանաստեղծական և նկարչական աշխատութիւնը» (1911), «Գրիգորիս Աղթամարցի» (1915), «Հինգ պատմագիտ տաղասացներ» (1921), «Արևոս կաթողիկոս Բագրատունեանց և իւր Պատմութիւն» (1923), Երաջատոր «Եկիշէ վարդապետ և իւր Պատմութիւն Հայոց պատերազմին» (1932, 1936, 1953), «Արմէոն Գարի Լեհացոյ ուղեգրութիւն» (1932), «Արևոսի ժամանակագիրն և Փ. Բիւզանդեայ Ա. Պատմութիւնը» (1938), «Արմէոն Պղնձահանեցի և իւր թարգմանութիւնները վրացերենէ» (1947), «Գրիգոր Բահանայ Ակինեցի, պատմագիր թաթարաց պատմութեան» (1948), «Շահապիվանի ժողովուն կանոնները» (1949), «Կորիւն Վարր Երանելոյն Մաշտոց վարդապետի» (1949), «Բաղեշի զպրոցը» (1951) և այլն:

Ազգուցիկ իմացությունը հնարավորություն է բնձնել հանդուցյալ գիտնականին զբաղվելու նաև հայ թարգմանական գրականության համեմատական ուսումնասիրությամբ և հայտնարներելու մի շարք նոր բնագրեր, որոնցից են՝ Հովհան Ոսկերերանի մի աշխատության շայնարարութեմը ասորական մի կրկնագիր ձեռագրում, Թեոնի «Վասն ճարտասանական կրթութեանց» երկը, «Գիտնասիրոս Աղեսանդրոս մի թուղթ» և այլ գործեր:

Հայ մատենագրության բազմադարյա շերտերը պեղող և երբեմն բեկորների հիման վրա

ամբողջությունների պատկերը վերականգնող մի հետախույզ ընականաբար կարող էր ստանալ,— և մանավանդ գործունեություն վերջին քրջանում ստացավ,— նաև սխալ տպավորություններ իր ուսումնասիրած որոշ երկերի կապակցությամբ, սակայն նա միշտ ունկնդրել է ընկալաբանությանը և հաճախ ինքն անդրադարձել իր սխալներին:

Օրինակելի աշխատասիրությունն ու անձնրվեր սերը մեծուպատառ մատենագրության նկատմամբ ուղեկցեցին ծերունագարդ գիտնականին մինչև կյանքի վերջին տարիները և նա ապագա հրատարակիչներին կտակեց շուրջ մեկ տասնյակ անտիպ գործեր, որոնք նոր յույս են տիրելու հայագիտության զանազան աուտրկանների մրա:

Չեռագիր վիճակում են գտնվում հանդույ-  
յալի՝ «Ժամանակագրություն հայ գաղթական-

նութեան ի երիմ (1300—1700)», «Սուտն կա-  
լիստենէսի Աղեքսանդրի վկար հայ թարգմա-  
նութեամբ ըստ հնագոյն խմբագրութեան»,  
«Պատմութիւն հայ թարգմանութեան օտարա-  
լեզու ընագիրներու» (408—1800), «Պատմու-  
թիւն հայ մատենագրութեան» (408—1800)  
երեք հատորից, Եալեմբյարյան-Ակիկյան «Հա-  
յերէն տպագրութիւններ առաջին 300 տարի-  
ներու» (1512—1812) և այլ գործեր:

Չ. Տաշյան, Ն. Աղոնց, Ե. Հովսեփյան,  
Գ. Տեր-Մկրտչյան, Ն. Մառ, Յ. Մարկվարտ,  
Մ. Արեղյան, Չ. Աճառյան, Ստ. Մալխասյանց՝  
անձնական ծանոթներն ու գրչակիցներն են  
եղել բազմաշխատ գիտնականի, որի հիշատա-  
կը կապրեցնեն իր անխոնջ գրչի արտագրանք-  
ները:

Գ. ԱՐԿԱՐՅԱՆ

**Վ. Ա. Գ. ԲՆԵՇՅԱՆՈՒ**

Նոյեմբերի 8-ին Բուխարեստում մահացավ Ռուսինական ժողովրդական Ռեսպուբլիկայի անվանի գիտնական, վաստակավոր հայագետ պրոֆ. գ-ր Վլադ Բընըջյանուն:

Պրոֆ. Բընըջյանուն ծնվել է 1900 թ. օգոստոսի 22-ին Ռուսինիայի Տիմիշոարա քաղաքում: Չերնովիցի համալսարանը ավարտելուց հետո, նա իր մասնագիտական ուսումը շարունակել է Փարիզում, Լոնդոնում և Գոթթինում (1924—1932 թթ.): Ստացել է իրավաբանական գիտությունների դոկտորի (1923) և բանասիրական գիտությունների դոկտորի (1931) գիտական աստիճաններ:

Իրեն լեզվաբան նա հմուտ էր նեղեզու-  
ղական համեմատական լեզվաբանության մեջ և տիրապետում էր բազմաթիվ լեզուների (ուսե-  
կրիտ, հայերեն, հին պարսկերեն, հունարեն,  
լատիներեն, հայանդերեն, ալբաներեն, կելտա-  
կան լեզուներից՝ գալլերեն ու իռլանդերեն,  
պալեոսկան լեզուներ, այդ թվում նաև սու-  
սերեն, եվրոպական նորագոյն լեզուներ և այլն):  
Պրոֆ. Վլադ Բընըջյանուի գիտա-մանկավար-  
ժական գործունեությունը հասկանալու մեծ թափ  
ստացավ Ռուսինիայում ժողովրդագրական  
տական կարգեր հաստատվելուց հետո: Նա  
Բուխարեստի համալսարանում եղանակից  
Չեղեվրոպական լեզուների համեմատական հրեշ-  
յանարանության, Աեարանության և շարահյու-  
սության, սակերների և սմբրերների ու հին պար-  
կերների գասախուս 1934 թ. սկսած գասախու-  
սել է նաև Բուխարեստի մանկավարժական  
ինստիտուտում: 1938 թ. ստանձնել է նաև Ռու-

սինիայի գիտությունների ակադեմիայի նեղեզ-  
ուպական լեզվաբանության սեկտորի վարչի  
պաշտոնը:



Անվանի գիտնականը երկար տարիների  
իր բնօրն և բազմաբովանդակ սանդագործա-  
կան կյանքի մի մասը նվիրարերեց հայագի-  
տությունը: Նա աշակերտել էր այնպիսի պատ-  
կասելի հայագետների, ինչպիսիք են Ա. Մելեն,  
Յր. Մակկերը, Ն. Յորգան, Լ. Մարիեք և  
որրիներ, աշխատակցել երանց հետ: